

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

23 հունիսի 2021թ.

N 48 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հարկային դաշտում և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) գործառության լիազորությունների իրականացմանն առնչվող մասնագիտության հետ կապված իրավական դաշտում տեղի ունեցող զարգացումներին և օրենսդրական փոփոխություններին անմասն չմնալու նպատակահարմարությունը և հիմք ընդունելով Պալատի կանոնադրության 14.16.26 և 18.7.1 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Կազմավորել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերի ժամանակավոր հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովի գործունեության ժամկետը սահմանել սույն որոշման ընդունման օրվանից 1 (մեկ) օրացուցային տարի՝ երկարաձգման հնարավորությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ